
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՆՆԱ ԱՍՍՏՏՐՅԱՆ

Հայ արվեստագիտության պատմության մեջ, հիրավի, շրջադարձային էր 1958 թվականը, երբ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Նախագահության որոշմամբ մայիսի 1-ին հիմնադրվեց արվեստի ինստիտուտը, որին բացառիկ դեր էր վերապահված հայագիտության՝ ի մասնավորի հայ արվեստագիտության համակարգում: Արվեստի ինստիտուտի գործունեության առաջին տասնամյակում էլ հենց նախանշվում են այն հիմնական ուղղությունները, որոնցով պիտի ընթանար հայրենական արվեստագիտության զարգացումը հետագա բոլոր տասնամյակներում:

Դեռևս 1934-ի փետրվարի 19-ին Երևանի պետական կոնսերվատորիային կից կազմակերպվում է Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական գիտահետազոտական կաբինետը, որը գործել է որպես ինքնուրույն հիմնարկ՝ Արվեստի վարչության ցանցում: Վեց տարի անց՝ 1940-ի հունվարին կաբինետին կից ստեղծվում է գիտական խորհուրդ²: Իսկ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի կազմում 1943-ին հիմնադրված Պատմության ինստիտուտի կառուցվածքում գործող չորս բաժիններից մեկը հենց արվեստի պատմության բաժինն էր, որը «տվյալ ժամանակաշրջանի վավերագրերում կոչվել է սեկտոր»³: Ընդ որում՝ Պատմության ինստիտուտը «1944 թ. ունեցել է վեց ասպիրանտ, որոնցից երեքը՝ Ա. Սահինյանը, Մ. Մարգարյանը և Ա. Երեմյանը, մասնագիտանում էին հայ արվեստի պատմության գծով»⁴:

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հիմնադրումից ամիսներ անց նրա համակարգում է ընդգրկվում Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետին կից Արվեստի գործերի կոմիտեին ենթակա Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական գիտահետազոտական կաբինետը, որը հրնթացս իր գործունեության տասը տարիների ստեղծել էր գիտական ուսումնասիրություններ կատարելու համար ամուր բազա և մասնագիտական համապատասխան կադրեր: Ակադեմիայի համակարգում կաբինետը վերակառուցվում է Երաժշտության պատմության, իսկ որոշ ժամանակ անց՝ նաև տեսության սեկտորի:

Երաժշտության պատմության ու տեսության սեկտորի բազայի վրա

¹ Ինստիտուտի ստեղծման և կապերի մասին տեղեկություններ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի արխիվ, գործ -17:

² Ռ. Մ ա գ մ ա ն յ ա ն. Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1920–1945), Երևան, 1979, էջ 226:

³ Գ. Գ Ր Ի Գ Ո Ր Յ ա ն. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի 60 տարին, Երևան, 2003, էջ 6:

⁴ Նույն տեղում, էջ 45–46:

ստեղծվում է Արվեստների պատմության ու տեսության սեկտորը: Նախապես փորձ է արվում ստեղծել հայ արվեստի պատմության սեկտոր: Վերակառուցումը չի իրականացվում, սակայն կատարված նախապատրաստական աշխատանքները հիմք են դառնում Արվեստների պատմության ու տեսության սեկտորի ստեղծման համար, որն Ակադեմիայի Նախագահության 1948 թ. հունվարի 28-ի №-2 նիստի որոշմամբ կազմակերպվում է մարտից: Ընդլայնվում են վերակառուցված սեկտորի գիտահետազոտական ուսումնասիրությունների շրջանակները: Նոր սեկտորն իր ուսումնասիրության ոլորտում հայ երաժշտության հարցերից զատ ընդգրկում է հայ ճարտարապետության, կերպարվեստի, թատրոնի պատմության ու տեսության պրոբլեմները ևս: Դրան համապատասխան, Նախագահության 1948 թ. հունվարի 28-ի №-2 նիստի որոշմամբ սեկտորում ստեղծվում են երաժշտության, ճարտարապետության, կերպարվեստի և թատրոնի բաժիններ: Բացի բաժիններից՝ սեկտորը դեռևս անցյալից ուներ ձայնագրման ստուդիա և ֆոնոտեկա, արխիվային ֆոնդերի ու երաժշտական գործիքների թանգարան, փակ գրադարան:

1949-ից 1951-ի հունիսը սեկտորի աշխատանքները դեկավարում է Մարտիրոս Մարյանը: Մարյանի՝ համաձայն իր դիմումի, Սեկտորի վարիչի պարտականություններից ազատվելուց հետո Նախագահության 1952 թ. հունվարի 9-ի №-1 նիստի որոշմամբ 1952 թ. հունվարից սեկտորի վարիչ է նշանակվում Վարազդատ Հարությունյանը:

Համաձայն ՀՍՄԽ Մինիստրների սովետի 1953 թ. փետրվարի 14-ի №-92 կարգադրության և ԳԱ նախագահության 1953 թ. ապրիլի 1-ի №-6 նիստի որոշման՝ 1953 թ. ապրիլ ամսից Սեկտորի կազմը կրճատվում է և այն մուծվում է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, ինչի արդյունքում այն վերանվանվում է Գրականության և արվեստի ինստիտուտի, որի չորս սեկտորներից մեկն էլ դառնում է Արվեստի պատմության ու տեսության սեկտորը: Տարեվերջին Ակադեմիայի Նախագահությունը քննության է առնում սեկտորի վերականգնման հարցը և տալիս դրական լուծում: 1953 թ. դեկտեմբերի 23-ի №-23 նիստի որոշմամբ՝ սեկտորը վերահաստատվում է որպես ինքնուրույն գիտահետազոտական հիմնարկ, վերստեղծվում են սեկտորի նախկին՝ երաժշտության, ճարտարապետության, թատրոնի և կերպարվեստի բաժինները, վերականգնվում են հաստիքային նախկին միավորները, սեկտորին տրվում են ավագ գիտական աշխատակիցների լրացուցիչ հաստիքներ և տրամադրվում ֆինանսական միջոցներ: Սեկտորի վարիչ է հաստատվում Ռուբեն Զարյանը:

1957 թ. օգոստոսի 29-ին Ակադեմիայի Նախագահությունը որոշում է ընդունում՝ 1958 թ. հունվարից Արվեստների պատմության ու տեսության սեկտորը վերակառուցել որպես Հայկական արվեստների ինստիտուտ:

Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետը, քննության առնելով Ակադեմիայի համակարգում Արվեստի ինստիտուտ ստեղծելու հարցը, 1958 թ. ապրիլի 18-ի №-Պ-129 որոշմամբ ընդունում է Նախագահության առաջարկը և թույլատրում Արվեստների պատմության ու տեսության սեկտորի բազայի վրա կազմակերպել Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստի գիտահետազոտական ինստիտուտ: Ելնելով վերոհիշյալ որո-

շումից՝ Ակադեմիայի Նախագահությունը 1958 թ. ապրիլի 30-ի №-8 նիստում ճշգրտում է ստեղծվելիք ինստիտուտի ուղղությունը և նրա առջև դրվելիք խնդիրները, այն է՝

ա/ հայ արվեստի պատմության ուսումնասիրություն,

բ/ արվեստի տեսության հարցերի արծարծում,

գ/ կիրառական արվեստի գիտափորձական մշակում:

Նախագահությունը հաստատում է ինստիտուտի հետևյալ կառուցվածքը՝

1. Երաժշտության սեկտոր

ա/ Հայ երաժշտության պատմության և տեսության բաժին

բ/ Կլասիկ կոմպոզիտորների ժառանգության ակադեմիական հրատարակության նախապատրաստման բաժին

գ/ Ժողովրդական երաժշտության կարիներտ և ֆոնոտեկա

2. Ճարտարապետության սեկտոր

ա/ Սովետահայ ճարտարապետության բաժին

բ/ Նախասովետական շրջանի ճարտարապետության բաժին

3. Թատրոնի և կինոյի սեկտոր

ա/ Հայ թատրոնի պատմության բաժին

բ/ Կինոյի բաժին

գ/ Հայ պարարվեստի պատմության բաժին

4. Կերպարվեստի սեկտոր

ա/ Հայ կերպարվեստի պատմության բաժին

5. Կիրառական արվեստի սեկտոր

6. Ֆոտոլաբորատորիա

7. Գրադարան:

Նորաստեղծ ինստիտուտի առջև դրվում են կարևոր խնդիրներ՝ առավել լայնորեն ուսումնասիրել արվեստի արդիական հարցերը, հետազոտական աշխատանքներում ներգրավել արվեստի նոր ճյուղեր, նոր բնագավառներ: Արվեստի ինստիտուտն իր առջև նպատակ է դնում մշակել հայ երաժշտության, ճարտարապետության, թատրոնի, կինոյի, կերպարվեստի և կիրառական արվեստների ինչպես անցյալ, այնպես էլ ժամանակակից սովետական շրջանի պատմության ու տեսության հարցերը, հրատարակել հայ արվեստի դասականների ժառանգությունը, պատրաստել ու արտադրության մեջ ներդնել կիրառական արվեստների օրինակելի նմուշներ:

Ինստիտուտի հիմնական խնդիրը հայ արվեստի համադրական պատմության ստեղծումն էր: Այդ դժվարին, բայց հույժ կարևոր գործի իրականացման ճանապարհին ինստիտուտը պետք է անցներ նախապատրաստական երեք փուլ:

Առաջին՝ հայ արվեստի խոշորագույն դեմքերին, արվեստի առանձին հիմնախնդիրներին, դարազույս կազմող ժամանակաշրջաններին, հարևան ժողովուրդների հետ ունեցած կապերին նվիրված ուսումնասիրությունների ստեղծում:

Երկրորդ՝ արվեստի տարբեր ճյուղերի՝ երաժշտության, ճարտարապետության, թատրոնի, կերպարվեստի պատմության հանրամատչելի ակնարկների ստեղծում:

Երրորդ՝ հայ արվեստի տարբեր բնագավառների պատմության գիտական ուսումնասիրություն և դրա հիման վրա բազմահատորյակների ստեղծում:

Այս կարևորագույն գործերի իրականացումը, բնականաբար, պահանջելու էր ոչ միայն տարիների ու տասնամյակների լարված աշխատանք, այլև արվեստաբանական լավագույն ուժերի համախմբում:

ՀԿՊ Կենտկոմի և Մինիստրների սովետի 1963 թ. հունիսի 12-ի №-22/278 որոշման համաձայն, ՀՍՍՌ ԳԱ պրեզիդենտ Վ. Համբարձումյանի և Կուլտուրայի մինիստր Հր. Մարգարյանի գրավոր կարգադրության հիման վրա՝ Արվեստի ինստիտուտը նույն թվականի հուլիսի 1-ից դուրս է բերվում Հայկական ՄՍՌ ԳԱ կազմից և հանձնվում ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրությանը՝ այդ կարգավիճակում մնալով մինչև 1966 թ. ապրիլը:

Ի դեպ, նկատենք, Արվեստի ինստիտուտի առաջին տնօրենն ու բազմամյա ղեկավարն էր ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր, ակադեմիկոս Ռուբեն Զարյանը: 1987–2003-ին այդ պաշտոնը վարել է ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր, ակադեմիկոս Լևոն Հախվերդյանը: 2003-ին տնօրենի պարտականություններն է ստանձնել ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը:

Հայաստանի կուլտուրայի մինիստրի 1965 թ. փետրվարի 3-ի համապատասխան հրամանի հիման վրա Ռ. Զարյանի 1965 թ. փետրվարի 6-ի №-21 հրամանով ստեղծվում է դիրեկտորի գիտական գծով տեղակալի պաշտոնը և նույն թվականի փետրվարի 1-ից այդ պաշտոնում նշանակվում է արվեստագիտության դոկտոր, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Մաբիր Ռիզանը (1965–1978): Ռիզանի վաղաժամ մահից հետո այդ պաշտոնում նշանակվում է արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Գևորգ Գյոդակյանը (1979–2005), ում փոխարինում է արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը (2005-ից):

Ստեղծման պահին ինստիտուտում գործել են երաժշտության (բաժնի վարիչ՝ Մաթևոս Մուրադյան), ճարտարապետության (բաժնի վարիչ՝ Ալեքսանդր Սահինյան), թատրոնի և կինոյի (բաժնի վարիչ՝ Ռուբեն Զարյան) և կերպարվեստի (բաժնի վարիչ՝ Ռուբեն Դրամբյան) սեկտորները: 1965-ին երաժշտության բաժնի հիմքի վրա սկսել են գործել երաժշտության (բաժնի վարիչ՝ Գևորգ Գյոդակյան) և Հայ ժողովրդական երաժշտության (բաժնի վարիչ՝ Մաթևոս Մուրադյան) սեկտորները: Ռ. Զարյանի 1967 թ. դեկտեմբերի 15-ի №-192 հրամանով՝ ինստիտուտի սեկտորները վերանվանվում են բաժինների, իսկ սեկտորների վարիչները՝ բաժինների վարիչների: 1979-ին ստեղծվել և մինչև 1991-ը գործել է Հեռուստատեսության և կինոյի բաժինը (բաժնի վարիչներ՝ Կարեն Քալանթար, Գարեգին Զաքոյան): 1962–1991-ին գործել է Կիրառական արվեստի բաժինը՝ փորձարարական արվեստանոցով (վարիչներ՝ Ռուբեն Դրամբյան, Մանյա Ղազարյան), 1968–1977-ին՝ Սփյուռքահայ արվեստի բաժինը (վարիչ՝ Գառնիկ Ստեփանյան), որը կրկին վերաբացվել է 2009-ին (վարիչ՝ Աննա Ասատրյան), 1979–1991-ին՝ Պատմության և մշակույթի հուշարձանների համա-

հավաքի բաժինը (վարիչներ՝ Մուրադ Հասրաթյան, Կորյուն Ղաֆադարյան և Հակոբ Միմոնյան): 1966-ից ինստիտուտում գործում է ակադեմիկոս Ռ. Զարյանի անվան Շեքսպիրագիտական կենտրոնը՝ շեքսպիրագիտական հարուստ գրադարանով:

Իր գոյության առաջին իսկ տարիներից Արվեստի ինստիտուտը դարձավ հայ արվեստագիտության գլխավոր կենտրոնը՝ առաջատարի ջանքն իր ձեռքին պահելով հետագա տասնամյակների ընթացքում: Ինստիտուտի գիտական ավանդույթների սկիզբը դրեցին նրա առաջին տնօրեն Ռուբեն Զարյանը և վերջինիս շուրջ համախմբված անվանի գիտնականներ Ալեքսանդր Մահինյանը, Ռուբեն Դրամբյանը, Մաթևոս Մուրադյանը, Գեորգի Տիգրանովը, Մուշեղ Աղայանը, Ստեփան Մնացականյանը, Մաբիր Ռիզանը և ուրիշներ: Ինստիտուտի գիտական գործունեության բնույթն ու ուղղվածությունը պայմանավորվեցին առաջին հերթին նրա հիմնադիրների՝ լայն հայացքների և գեղարվեստական նուրբ ճաշակի տեր մարդկանց հեղինակությամբ ու անհատական վառ նկարագրով: Նրանք դժվարությունների և փորձությունների միջով տարան հայագիտության, հայկական հումանիտար գիտության ու գեղարվեստական մտքի լավագույն ավանդույթները՝ զուգորդելով բարձր սկզբունքայնությունը և գիտական բարեխղճությունը: Օրինակ ծառայելով իրենց կրտսեր գործընկերների համար՝ նրանք մեծապես պայմանավորեցին ինստիտուտում տիրող ստեղծագործական առողջ մթնոլորտը: Ինստիտուտի ստեղծումը մեծապես նպաստեց հանրապետությունում արվեստի բնագավառում տարվող գիտահետազոտական աշխատանքների ընդարձակմանն ու խորացմանը:

Արվեստի ինստիտուտը գործել և գործում է առաջին հերթին իբրև հայ արվեստի պատմական զարգացման ուսումնասիրման կենտրոն, որը կոչված է հավաքագրել այդ բնագավառում հանրապետության առաջատար գիտական ուժերը՝ մեր գեղարվեստական հարուստ, հսկայածավալ ժառանգության բազմակողմանի ուսումնասիրման, գիտական իմաստավորման ու արժեքավորման, ինչպես նաև քարոզման նպատակներով: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է ակադեմիական գիտության մեջ ներմուծել գեղարվեստական ընթացիկ կյանքի նշանակալից երևույթները:

Արվեստի ինստիտուտը ոչ միայն հայ արվեստագիտության աներկբա կենտրոնն է, այլև՝ գիտական կադրերի պատրաստման անփոխարինելի դարբնոց: Ինստիտուտի ասպիրանտուրան տասնամյակներ շարունակ կադրերով է ապահովում ոչ միայն ինստիտուտի գիտական անձնակազմը, այլև հանրապետության բուհերն ու արվեստի մյուս հաստատությունները: Հայաստանի գիտությունների ակադեմիայի՝ արվեստագիտության և ճարտարապետության գծով իսկական անդամները՝ Ռուբեն Զարյանը, Լևոն Հախվերդյանը, Վարագդատ Հարությունյանը, և թղթակից անդամները՝ Մուրադ Հասրաթյանը, Հենրիկ Հովհաննիսյանը և Վիգեն Ղազարյանը՝ բացառապես Արվեստի ինստիտուտականներ են:

1965-ից Արվեստի ինստիտուտում գործող արվեստագիտության գծով գիտական աստիճանաշնորհման մասնագիտական խորհուրդը, որի յուրաժան «իրավահաջորդը» դարձավ Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման հանձնաժողովի որոշմամբ 1995-ին ստեղծված գիտա-

կան աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհուրդը՝ միակն է հանրապետությունում, որ գիտական աստիճաններ է շնորհում արվեստագիտության բոլոր բնագավառներում՝ ՃԷ. 00. 01 – «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն», ՃԷ. 00. 02 – «Երաժշտական արվեստ», ՃԷ. 00. 03 – «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» և ՃԷ. 00. 04 – «Արվեստի տեսություն և պատմություն», դրանով իսկ հանրապետության արվեստագիտական միտքն ապահովելով որակյալ կադրերով: Այսօր Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Երևանի պետական համալսարանի դասախոսների և գիտահետազոտական հաստատությունների գիտաշխատողների՝ արվեստագիտության թեկնածուների և դոկտորների ճնշող մեծամասնությունն իրենց թեկնածուական ու դոկտորական ատենախոսությունները պաշտպանել են ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդում և բոլորն էլ խորին երախտագիտությամբ են հիշում ինստիտուտի հետ կապված իրենց տարիներն ու շփումները:

Ինստիտուտի կեսդարյա պատմությանն ու գիտական նշանակալից ձեռքբերումներին է նվիրված Ա. Ասատրյանի «Արվեստի ինստիտուտ – 50» (Երևան, 2010) հանգամանալից աշխատությունը:

Ճարտարապետության պատմության և տեսության բնագավառում կարևորագույն նվաճումներից է Գառնիի հեթանոսական տաճարի վերականգնման գիտական հիմնավորումը, որը հավանության արժանացավ 1968-ին: Նախագծի հեղինակ Ալեքսանդր Սահինյանի ղեկավարությամբ 1968–1975 թթ. իրականացվեց տաճարի վերակառուցումը (Հայաստանի պետական մրցանակ): Արվեստի ինստիտուտի, Միլանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական խմբի և Վենետիկի «Հայ մշակույթի ուսումնասիրման կենտրոնի» համագործակցության շնորհիվ 1968–1998 թթ. Միլանում իտալերեն, հայերեն և անգլերեն լեզուներով հրատարակվեցին «Հայ ճարտարապետության վավերագրերը» մատենաշարի 23 պրակները՝ նվիրված Հաղպատին, հայկական խաչքարերին, Սանահինին, Ամբերդին, Գոշավանքին, Գանձասարին, Հաղարծնին, Գեղարդին, Աղթամարին, Կեչառիսին և այլն, որոնք միջազգային գիտական հանրությանը ներկայացրեցին ազգային շինարարական արվեստի գոհարները: Բազմակողմանի բնույթ է կրում միջնադարյան հայ ճարտարապետության ուսումնասիրումը: Գրվել են ինչպես դրա պատմությանը, այնպես էլ քաղաքաշինությանը և քաղաքացիական ճարտարապետությանը նվիրված ընդհանրացնող աշխատություններ (Վարագդատ Հարությունյան, Ստեփան Մնացականյան, Մուրադ Հասրաթյան, Արմեն Զարյան): Վաղ միջնադարյան հայկական ճարտարապետության բնագավառում էական նշանակություն ունեցան Ալեքսանդր Սահինյանի «Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը» աշխատությունը (Երևան, 1955) և Էջմիածնի տաճարում նույն հեղինակի պեղումները, որոնց հիման վրա գրված հոդվածները նոր լույս սփռեցին այդ հնագույն կառույցի շինարարական կյանքի վրա: Զվարթնո-

ցի, Բագարանի, Դղմաշենի, Կարենիսի, Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանների և մեմորիալ կոթողների ուսումնասիրմանը նվիրվեցին Ստեփան Մնացականյանի, Մուրադ Հասրայանի, Վահագն Գրիգորյանի, Մուրեն Մնացականյանի մենագրությունները: Հայկական ճարտարապետության զարգացման հաջորդ շրջանին էին վերաբերում Ստեփան Մնացականյանի, «Архитектура армянских притворов» (Երևան, 1952) և «Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը» (Երևան, 1960) արժեքավոր գրքերը, իսկ ճարտարապետության և քանդակագործության համադրման պրոբլեմները հատուկ տեղ գտան նրա «Աղթամար» (Երևան, 1983) մենագրության մեջ: Մուրադ Հասրայանի «Սյունիքի XVII–XVIII դարերի ճարտարապետական համալիրները» (Երևան, 1973) աշխատության մեջ վեր հանված ճարտարապետական հարուստ ժառանգությունը հիմք հանդիսացավ ուշ միջնադարի հայ շինարվեստը որպես անկումնային երևույթ ներկայացնող տեսակետները հերքելու համար: Գարտարապետության պատմաբանների ուշադրությանն արժանացավ առանձին տարածաշրջանների, այդ թվում՝ Արցախի ճարտարապետական դպրոցների և հուշարձանների ուսումնասիրությունը (Մուրադ Հասրայան, Արտակ Դուլյան): Ուշ միջնադարյան ճարտարապետության անմիջական շարունակությունն է 19-րդ դարի և 20-րդ դարասկզբի հայ ճարտարապետական մշակույթը, որը նոր էջ է բացում երկրի ճարտարապետական արվեստում: Դրա ուսումնասիրման են նվիրված Նուբար Պապուխյանի աշխատանքները, որտեղ հեղինակի ուշադրության կենտրոնում են հայկական և հայաբնակ քաղաքների կառուցապատման ու քաղաքաշինության հարցերը, ինչպես նաև ժողովրդական ճարտարապետության զարգացման փուլերը: Խորհրդահայ ճարտարապետության ուսումնասիրման բնագավառում զգալի է Լևոն Բաբայանի, Կոնստանտին Հովհաննիսյանի, Վարազդատ Հարությունյանի, Լևոն Զորյանի, Մուրադ Հասրայանի, Լույս Դոլուխանյանի, Կարեն Բայանի վաստակը: Հայ ճարտարապետության ականավոր ներկայացուցիչներին՝ Թորոս Թորամանյանին, Ալեքսանդր Թամանյանին, Ռաֆայել Իսրայելյանին և այլոց, ոճական տարբեր ուղղություններին, քաղաքաշինությանը, նոր շինանյութերի ու շինարարական առաջավոր մեթոդների որոնմանը նվիրված նրանց աշխատություններում ընդհանրացվեց խորհրդահայ ճարտարապետության հարուստ փորձը: Բնաստիտուտի ճարտարապետության պատմաբանների կարևոր խնդիրներից էր ճարտարապետության պատմությունն ընդհանրացնող աշխատությունների ստեղծումը: Այս ուղղությամբ առաջին փորձն էր «Ակնարկ հայկական ճարտարապետության պատմության» (Երևան, 1964, խմբագիրներ՝ Բաբկեն Առաքելյան, Միքայել Մազմանյան) կոլեկտիվ աշխատությունը, որի լրացված և վերափոխված ռուսերեն տարբերակը լույս տեսավ 1978-ին: Հանգրվանային հաջորդ աշխատանքը՝ «Հայկական ճարտարապետության պատմություն» վեցհատորյակն է: 1996–2004 թթ. տպագրվել են առաջին երեք հատորները (խմբագիրներ՝ Գևորգ Տիրացյան, Մուրադ Հասրայան), հրատարակման են պատրաստ հաջորդ գրքերը:

Միլանի կենտրոնի և Արվեստի ինստիտուտի համագործակցության կարևորագույն արդյունքներից մեկն էր հայ արվեստի միջազգային սիմ-

պոզիումների կազմակերպումը: Առաջին սիմպոզիումին, որը հրավիրվեց 1975-ին Իտալիայում, մասնակցեցին աշխարհի տարբեր երկրների շուրջ 60 ճանաչված գիտնականներ: Ձեկուցումներն աչքի ընկան փաստական նյութի առատությամբ, նոր հարցադրումներով, գիտական բարձր մակարդակով: Երկրորդ (1978) և չորրորդ (1985) սիմպոզիումները կայացան Երևանում, երրորդը (1981) և հինգերորդը (1988)՝ վերստին Իտալիայում: Միմյուրյանների զեկուցումները տպագրվեցին առանձին ժողովածուներով, որոնք զգալի ավանդ եղան հայկական արվեստի ուսումնասիրության բնագավառում:

Հայ կերպարվեստագիտության սկզբնավորումը սերտորեն կապված է փաստակաշատ արվեստաբաններ Լիդիա Դուռնովոյի և Ռուբեն Դրամբյանի անունների հետ: Ազգային արվեստագիտության այդ կարևորագույն ոլորտի առաջնահերթ խնդիրներից էր անցյալի հայ կերպարվեստի ուսումնասիրության հարցը: Հենց Լ. Դուռնովոն հաստատեց հայկական վաղ միջնադարյան որմնանկարչության գոյությունն ու նշանակությունը վաղ քրիստոնեական արվեստում: Ռ. Դրամբյանի հետ նա առաջինն էր, որ միջնադարյան ձեռագրերի մանրանկարչական արվեստը դասակարգեց ըստ դպրոցների, բնորոշեց դրանց առանձնահատկությունները, մանրանկարիչների ցանկը համարեց նոր անուններով: Կերպարվեստագիտության մեջ նրա ներմուծած միջնադարյան նկարչության ուսումնասիրման ավանդները շարունակեցին Լևոն Ազարյանը, Արամ Ավետիսյանը, Նիկոլայ Քոթանջյանը, Իրինա Դրամբյանը, Վիգեն Ղազարյանը, Լիլիթ Չաքարյանը, Սեյրանուշ Մանուկյանը և ուրիշներ: Հայկական վաղ միջնադարյան պատկերաքանդակի ուսումնասիրության գործում շոշափելի է Ստեփան Մնացականյանի և Լևոն Ազարյանի ներդրումը: Ստեղծվում են Կիլիկիայի, Գլաձորի, Վասպուրականի, Ղրիմի, Արցախի մանրանկարչական դպրոցներին նվիրված մենագրություններ, ընդլայնվում են միջնադարյան հայ կերպարվեստի ուսումնասիրության շրջանակները, լուսաբանվում են նշանավոր մանրանկարիչ-ծաղկողների՝ Թորոս Ռոսլինի, Սարգիս Պիծակի, Հակոբ Ջուղայեցու և այլոց ստեղծագործական ժառանգության յուրահատկությունները, գիտական ուսումնասիրության նյութ են դառնում հայկական զարդանկարչությունը, որմնանկարչությունը, քանդակագործությունը, խաչքարերը, միջնադարյան հայ ճարտարապետության և կերպարվեստի մի շարք ճյուղերի համադրման հարցերը: Վերջին շրջանում հայ միջնադարյան կերպարվեստի ուսումնասիրողներին (Նիկոլայ Քոթանջյան, Վիգեն Ղազարյան) գրավում են նաև տեսական խնդիրները. գույնի և հորինվածքի, սյուժետային նկարների գեղագիտական, գեղարվեստական և պատկերագրական հիմքերի բացահայտումը, խորանների մեկնությունները: Մանյա Ղազարյանի գրքերում ու հոդվածներում առաջին անգամ հանգամանորեն լուսաբանվել է 17-18-րդ դարերի հայ կերպարվեստը՝ բնորոշվելով որպես միջնադարը նոր շրջանի հետ կապող անցումային կարևոր օղակ: Ինստիտուտի մասնագետների ուշադրության կենտրոնում է նաև նոր և նորագույն հայ կերպարվեստի պատմությունը. հրատարակվել են տվյալ շրջանների ազգային նկարչության ու քանդակագործության տարբեր տեսակներին և ժանրերին վերաբերող, գեղարվեստ-

տական կյանքը լուսաբանող, առավել խոշոր վարպետների ստեղծագործությանը նվիրված բազմաթիվ գրքեր ու մենագրություններ (Ռուբեն Դրամբյան, Մինաս Սարգսյան, Մարիամ Այվազյան, Մանյա Ղազարյան, Նոնա Ստեփանյան, Վիլիելմ Մաթևոսյան, Արարատ Աղասյան, Ալիս Ներսիսյան, Արթուր Ավագյան): Հայ կերպարվեստի պատմական զարգացումն ամբողջացնող կամ դրա առանձին խոշոր շրջափուլերին նվիրված հիմնարար ուսումնասիրություններ են Լիդիա Դուռնովոյի «Краткая история древнеармянской живописи» (Երևան, 1957) և «Очерки изобразительного искусства средневековой Армении» (Մոսկվա, 1979), Նոնա Ստեփանյանի «Очерк изобразительного искусства Армении» (Մոսկվա, 1985) և «Искусство Армении. Черты историко-художественного развития» (Մոսկվա, 1989 և 2007), Արարատ Աղասյանի «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX–XX դարերում» (Երևան, 2009) մենագրությունները, ինչպես նաև «Очерки по истории армянского изобразительного искусства» (Երևան, 1979, խմբագիրներ՝ Մարիամ Այվազյան, Նոնա Ստեփանյան) կոլեկտիվ աշխատությունը և ազգային ճարտարապետության ու կերպարվեստի զարգացման ողջ ընթացքը զուգահեռաբար ներկայացնող՝ Արարատ Աղասյանի, Մուրադ Հասրաթյանի, Հրավարդ Հակոբյանի և Վիգեն Ղազարյանի հեղինակած «Հայ արվեստի պատմությունը» (Երևան, 2009, Հայաստանի պետական մրցանակ):

Հայ երաժշտագիտության զարգացումն ընթացել է հիմնական երեք ուղիով. հայ երաժշտության պատմություն և տեսություն, հայ դասականների ստեղծագործական ժառանգության տպագրության նախապատրաստում և հրատարակում, երաժշտական ֆոլկլորագիտություն: Արվեստի ինստիտուտի երաժշտագետները զբաղվել են մի կողմից՝ հայ դասական և հոգևոր երաժշտության հարուստ ժառանգության, մյուս կողմից՝ ժամանակակից երաժշտական իրականության կանոնավոր ուսումնասիրությամբ: Հայրենական երաժշտագիտական մտքի ակնառու ձեռքբերումներից են Քրիստափոր Քուշնարյանի «Вопросы истории и теории армянской монодической музыки» (Լենինգրադ, 1958) աշխատությունը և Գեորգի Տիգրանովի «Армянский музыкальный театр» (Երևան, 1956–1988) քառահատորը, որն արժանացել է Հայաստանի պետական մրցանակի: Հայ հին և միջնադարյան երաժշտության ուսումնասիրման մեջ կարևոր ներդրում են Նիկողայոս Թահմիզյանի աշխատությունները: Երաժշտական միջնադարագիտության համար արժեքավոր են Աննա Արևշատյանի և Միեր Նավոյանի գիտական պրպտումները: Արամ Քոչարյանի գիտահետազոտական գործունեության հիմնական ոլորտներից էր հայ աշուղական երգարվեստը: Հայ դասական երաժշտության տարրեր ժանրերի զարգացման պատմությանը, երաժշտական առնչություններին, ինչպես նաև Գրիգոր Նարեկացուն, Ներսես Շնորհալուն, Կոմիտասին, Տիգրան Զոխաճյանին, նոր և նորագույն ժամանակների հայ նշանավոր կոմպոզիտորներին են նվիրված Գեորգի Տիգրանովի, Մաթևոս Մուրադյանի, Նիկողայոս Թահմիզյանի, Ռոբերտ Աթայանի, Գևորգ Գյոդակյանի, Կարինե Խուդարաշյանի, Մարգարիտա Տեր-Միմոնյանի, Անահիտ Գրիգորյանի, Մարգարիտա Ռուխկյանի, Լիլիթ Երնջակյանի, Աննա Ասատրյանի մենագրությունները:

Ընդհանուր առմամբ լուսաբանվել է հայ երաժշտության ու երաժշտական կյանքի առանձին շրջափուլերի, ինչպես և դրանց ամբողջական պատմությունը: Լուրջ աշխատանք է կատարվել ազգային երաժշտական մշակույթի դասականների ստեղծագործական ժառանգության հրատարակության համար: Ինստիտուտը հրատարակել է Ալեքսանդր Սպենդիարյանի Երկերի լիակատար ժողովածուն 11 հատորով (Երևան, 1943–1985, խմբագիր՝ Գևորգ Բուդաղյան) և Կոմիտասի Երկերի ժողովածուն՝ 14 հատորով (Երևան, 1960–2006, խմբագիրներ՝ Ռոբերտ Աթայան, Գևորգ Գյոդակյան): Ինստիտուտում մեծ ուշադրություն է դարձվել երաժշտական ֆոլկլորագիտության զարգացմանը, որն ընթացել է հետևյալ հիմնական ուղղություններով. ա) գիտարշավների միջոցով հայ ժողովրդական՝ գեղջկական, աշուղական, քաղաքային երգերի և ավանդական նվագարանային երաժշտության նմուշների հավաքում, բ) հավաքված նյութի ուսումնասիրում, դասակարգում և անձնագրավորում, գ) նմուշների վերծանում և նոտագրում, ե) ժողովրդական երգերի ժողովածուների նախապատրաստում և հրատարակում: Դժվար է գերազանահատել Արվեստի ինստիտուտի ձայնադարանային հարուստ ֆոնդի նշանակությունը. սա երաժշտական-բանահյուսական եզակի սկզբնաղբյուրի բացառիկ արժեք ունի: Դրա հիման վրա են հրատարակվել Կոմիտասի սան Միհրան Թումաճանի «Հայրենի երգ ու բան» քառահատոր ժողովածուն (Երևան, 1972–2005) և «Հայ ավանդական երաժշտություն» մատենաշարի ինը հատորները (Երևան, 2008–2013, խմբագիր՝ Կարինե Խուդաբաշյան):

Արգասավոր ճանապարհ է անցել հայ թատերագիտությունը՝ փաստական նյութի կուտակումից դեպի արվեստագիտական ընդհանրացումներ, մենագրական աշխատություններից դեպի թատրոնի պատմություն ու տեսություն: Որպես նախորդ դարասկզբին ձևավորված գիտություն, այն դարձել է առաջատար ճյուղերից մեկը Արվեստի ինստիտուտի հիմնադրման իսկ օրից: Հայ դերասաններ ու բեմադրիչներ Պետրոս Ադամյանին, Միրանուշին, Հովհաննես Աբելյանին, Մարտիրոս Մնակյանին, Արմեն Արմենյանին, Վավիկ Վարդանյանին, Մկրտիչ Ջաննին, Հրաչյա Ներսիսյանին, Սուրեն Քոչարյանին, Արմեն Գուլակյանին, Վարդան Աճեմյանին, Հրաչյա Ղափլանյանին և այլոց են նվիրված Ռուբեն Զարյանի, Լևոն Հախվերդյանի, Գառնիկ Ստեփանյանի, Նշան Մուրադյանի, Հենրիկ Հովհաննիսյանի մենագրությունները: Համակարգվել և ամբողջացվել է հայ թատրոնի պատմությունը հնադարից մինչև XX դարակեսը (Հենրիկ Հովհաննիսյան, Լևոն Հախվերդյան): Առաջադրվել է դրամայի ծագման նոր տեսություն, բացահայտվել են հելլենիզմի հետ ունեցած առնչությունները, նաև հայ միջնադարյան թատրոնի տեղը առաջավորասիական մշակույթում (Հենրիկ Հովհաննիսյան, Գրիգոր Օրդոյան): Կազմվել է հայ նոր թատրոնի բազմահատոր ժամանակագրությունը՝ ընդարձակ մատենագիտությամբ (Բաբկեն Հարությունյան): Գեղագիտորեն իմաստավորվել է հայ նոր թատրոնի պատմությունը եվրոպական թատերական մշակույթի համատեքստում: Մանրամասնորեն լուսաբանվել են արևմտահայ թատրոնի պատմությանն առնչվող հանգուցային հարցերը (Գառնիկ Ստեփանյան): Հանգամանորեն դիտարկվել է հայկական բեմադրական արվեստի

պատմական ուղին (Սաբիր Ռիզան): Ներկայացվել է հայկական բեմանկարչության ամփոփ պատկերը (Լևոն Խալաթյան): Միյուրքահայ թատրոնի ուսումնասիրման ուղղությամբ առաջին լուրջ քայլը Գառնիկ Ստեփանյանի «Անարկներ սիյուրքահայ թատրոնի պատմության. ֆրանսահայ թատրոն» (Երևան, 1982) աշխատությունն է: Շարադրվել է եգիպտահայ թատրոնի պատմությունը (Անահիտ Չոյան): Մշակվել է դերասանի արվեստի, որպես ինքնուրույն գեղարվեստական համակարգի տեսությունը (Հենրիկ Հովհաննիսյան): 1966-ին ինստիտուտին առընթեր Շեքսպիրագիտության հայկական կենտրոնի և վերջինիս կից շեքսպիրյան եզակի գրադարանի ստեղծումից հետո գիտական ամուր հիմքերի վրա է դրվել Շեքսպիրի ու հայ գրականության և արվեստի, մասնավորապես՝ թատրոնի հետ կապված խնդիրների ուսումնասիրությունը, որի արդյունքներն արտացոլվել են պարբերաբար հրատարակվող «Շեքսպիրական» ժողովածուի յոթ պրակներում (Երևան, 1967–1985, խմբագիր՝ Ռուբեն Զարյան):

Որոշակի առաջընթաց է ապրել նաև կինոգիտությունը՝ հայ արվեստագիտության ամենաերիտասարդ բնագավառը: Հրատարակված աշխատություններում առանձին ուշադրություն է հատկացվել ինչպես հայ կինոյի ակադեմիկոսների ստեղծագործության, այնպես էլ ազգային կինոարվեստի պատմական զարգացման ուսումնասիրությանը: Հայ կինոյի պատմության և տեսության հարցերն են շոշափել «Հայկական կինոարվեստը» (Երևան, 1958–1960, կազմող՝ Սաբիր Ռիզան) խորագրով կինոգիտական հոդվածների ժողովածուները: Աշխատանքներ են տարվել հայ կինոյի տարեգրության, ֆիլմագրության և մատենագրության ստեղծման ուղղությամբ, մշակվել են կինոգիտության հրատապ խնդիրներ, կազմակերպվել տեսական կոնֆերանսներ ու գիտաժողովներ: Կինոգիտական լուրջ նվաճումներ են Սաբիր Ռիզանի «Армянская художественная кинематография» (Երևան, 1963), Գարեգին Զաքոյանի «Армянское немое кино» (Երևան, 1976), Կարեն Քալանթարի «Актер в армянском кино. Концепция фильма и актерский образ» (Երևան, 1982) աշխատությունները, վերջինիս «Очерки истории армянского кино» (Երևան, 2004–2007) երկհատորյակը, ինչպես նաև հայ անվանի կինոռեժիսորներ Համո Բեկ-Նազարյանին, Սերգեյ Փարաջանովին, Հենրիկ Մայյանին և այլոց նվիրված մենագրությունները:

Արվեստի ինստիտուտում ի սկզբանե կարևորվել է դեկորատիվ-կիրառական արվեստի ուսումնասիրությունը, որի ինքնատիպ բնագավառներից մեկը՝ դաջարվեստը, գեղարվեստական դասակարգման ենթարկեց Լ. Դուրնովոն: Հայկական գործվածքների ուսումնասիրման առումով անգնահատելի է Սերիկ Դավթյանի վաստակը. նրա երեք կարևոր աշխատությունները նվիրված են հայկական ժանյակին, կարպետին ու ասեղնագործությանը: Նա առաջինն էր, ով հայկական ասեղնագործությունը դասակարգեց ըստ տեխնոլոգիական հնարների և ուրվագծեց հայկական ասեղնագործության հիմնական դպրոցները, ամփոփ ներկայացրեց հայկական կարպետի տեսակները, արժեքավորեց ժանյակի արվեստը: Միջնադարյան կիրառական արվեստի ամբողջական պատկերը վերականգնելու փորձեր են Ս. Դավթյանի «Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի

պատմության» (Երևան, 1981) աշխատությունը, ինչպես նաև «Декоративное искусство средневековой Армении» (Լենինգրադ, 1971, կազմողներ՝ Նոնա Ստեփանյան, Արտո Չաքմաքչյան) պատկերագիրքը: Եթե անցյալում ժողովրդական արվեստի այդ ոլորտն ուշադրության էր արժանանում սուսկ հնագիտական կամ ազգագրական տեսակետներից, ապա Լ. Դուրնովոյի և Ս. Դավթյանի վերոհիշյալ աշխատանքներում, ինչպես նաև Մանյա Ղազարյանի, Նոնա Ստեփանյանի, Ջեփյուր Թառայանի, Վահրամ Թաթևկյանի գրքերում ու հոդվածներում շեշտը դրվում է դեկորատիվ-կիրառական արվեստի առանձին բնագավառներին առնչվող գեղարվեստական խնդիրների վրա:

Այսօր Արվեստի ինստիտուտն այն միակ գիտական օջախն է, որտեղ կատարվող ուսումնասիրությունների կարևոր ուղղություններն են հայ արվեստի գրեթե բոլոր տեսակների (կերպարվեստ, ճարտարապետություն, դեկորատիվ և կիրառական արվեստներ, երաժշտություն, թատրոն, կինո և հեռուստատեսություն) պատմության և տեսության հիմնախնդիրները: Ինստիտուտում աշխատանքներ են տարվում ազգային երաժշտության ու թատրոնի, ճարտարապետության և կերպարվեստի դասականների ստեղծագործական, հուշագրային, նամակագրական ժառանգության ակադեմիական հրատարակության, ֆոլկլորային նմուշների հավաքման, դասակարգման, վերծանության, համակարգչային մշակման ուղղությամբ:

Արվեստի ինստիտուտում գիտական տեղեկատվությունը ապահովում են հետևյալ գրադարանային, ձայնադարանային և արխիվային միավորները՝

1. Արվեստաբանական գրադարանը,
2. Ռուբեն Զարյանի անվան Շեքսպիրագիտական կաբինետ-գրադարանը,
3. Ժողովրդական երաժշտության բաժնի գրադարանը,
4. Սփյուռքահայ արվեստի բաժնի գրադարանը,
5. Արամ Քոչարյանի անվան ձայնադարանը,
6. Արվեստի ինստիտուտի արխիվը:

Այսօր Արվեստի ինստիտուտում գործում են գիտական հետևյալ ստորաբաժանումները՝ ա) ճարտարապետության բաժին (վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, ՀՀ վաստակավոր ճարտարապետ, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Մուրադ Հասարյան), բ) կերպարվեստի բաժին (վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Վիգեն Ղազարյան), գ) երաժշտության բաժին (վարիչ՝ ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Գյոդակյան), դ) թատրոնի բաժին (վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հենրիկ Հովհաննիսյան), ե) ժողովրդական երաժշտության բաժին (վարիչ՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Մհեր Նավոյան) և զ) սփյուռքահայ արվեստի բաժին (վարիչ՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյան): Ինստիտուտում 2004-ից գործում է Երիտա-

սարդ արվեստաբանների խորհուրդը (նախագահ՝ Մերի Կիրակոսյան), որի նախաձեռնությամբ ինստիտուտի պատմության մեջ առաջին անգամ 2005-ից գումարվել են գիտական յոթ նստաշրջաններ՝ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի և գիտակրթական ու մշակութային այլ օջախների երիտասարդ գիտնականների մասնակցությամբ: Հրատարակվել են գիտական նստաշրջանների նյութերի ժողովածուները:

Իր հիմնադրման 55-ամյակը բոլորած ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի վաստակաշատ ու ժրջան կոլեկտիվն այսօր էլ շարունակում է իր արդյունավետ գործունեությունը՝ հանուն հայ արվեստագիտության առաջընթացի, ի շահ հայագիտության զարգացման՝ գրելով ինստիտուտի տարեգրության հետագա էջերը:

ИНСТИТУТ ИСКУССТВ

АННА АСАТРЯН

Резюме

Институт искусств НАН РА основан в 1958 году. Со дня основания до 1987 года директором Института был академик Рубен Зарян. С 1987 года на этом посту его сменил академик Левон Ахвердян. С 2003 года директором Института является доктор искусствоведения, профессор Арарат Агасян. С 1995 года в Институте действует единственный в республике специализированный совет по присуждению ученых степеней во всех областях искусствознания. Институт имеет следующие научные подразделения: отдел архитектуры (заведующий – Мурад Асатрян), отдел изобразительного искусства (заведующий – Виген Казарян), отдел музыки (заведующий – Геворк Геодакян), отдел театра (заведующий – Генрик Оганесян), отдел народной музыки (заведующий – Мгер Навоян) и отдел искусства армянской диаспоры (заведующая – Анна Асатрян).

Институт – единственное научное учреждение, где основными направлениями проводимых исследований являются история армянского искусства и связанные с ней теоретические проблемы. В Институте ведутся также работы по академическому изданию творческого наследия классиков национальной музыки и театра, архитектуры и изобразительного искусства, по сбору, классификации, расшифровке и компьютерной обработке образцов музыкального фольклора. Полувековая история Института и его наиболее значительные научные достижения подробно освещены в книге А. Асатрян «Институт искусств – 50» (Ереван, 2010).

INSTITUTE OF ARTS

ANNA ASATRYAN

S u m m a r y

The Institute of Arts of NAS RA was founded in 1958. From its foundation to 1987 it was headed by its executive director academician Ruben Zaryan. In the period from 1987 to 2003 the position was taken by academician Levon Hakhverdyan. In 2003, doctor of art-criticism, professor Ararat Aghassyan assumed the post. From 1995 the Institute of Arts had its specialized council, the only one in the Republic that confers academic titles in all spheres of Art History. Today the following subdivisions function at the Institute of Arts of NAS RA: the Department of Architecture (headed by Murad Hasratyan), the Department of Painting (headed by Vigen Ghazaryan), the Department of Musical Science (headed by Gevorg Gyodakyan), the Department of Drama Studies (headed by Henrik Hovhanissyan), the Department of Folk Music Studies (headed by Mher Navoyan) and the Department of Art of the Armenian Diaspora (headed by Anna Asatryan).

Today the Institute of Arts is the only scientific institution whose research scope involves main issues in the history and theory of such spheres of the Armenian Art, as painting, architecture, decorative and applied arts, musical science, drama, cinematography and TV. The workers of the Institute seek to collect, classify and enter into the computer the creative and epistolary legacy of the classics, academic publications and folklore samples in the spheres of folk music, drama, architecture and painting.